ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 126/11-լ «06» 04 2023

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝ ուսումնական գործընթացի բնականոն ընթացքն ապահովելու նպատակով

հրամայում եմ.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանում բակալավրիատի և մագիստրատուրայի սովորողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի վերահանձնման ընթացակարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 2016թ. ապրիլի 18-ի թիվ 67§31, 2016թ. դեկտեմբերի 27-ի 238§55, 2017թ. հուլիսի 24-ի թիվ 136§59, 2018թ. հունիսի 18-ի թիվ 111§135 և 2021թ. հունիսի 11-ի 108/16 հրամանները:
3. Սույն հրամանով սահմանված ընթացակարգի դրույթները տարածվում են ԵՊՀ բոլոր սովորողների վրա:
4. Սույն հրամանով սահմանված ընթացակարգը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքէջում:
5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՌԵԿՏՈՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հաստատված է
ԵՊՀ ռեկտորի 06.07.2023թ. թիվ 126/11-Լ հրամանով

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ՝ ՄԻՆՉԵՎ 12 ԿՐԵԴԻՏ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԸ ՎԵՐԱՀԱՆՁՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) սովորողների՝ մինչև 12 կրեդիտ առարկայական պարտքերի (այսուհետ՝ առարկայական պարտք) վերահանձնման գործընթացի կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1676-Ն հրամանի 11-րդ կետի պահանջների:

2. Քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանից հետո առարկայական պարտքը վերահանձնելու համար սահմանվում է երկու եղանակ՝

1) դասընթացի քննության (ստուգարքի) վերահանձնում,

2) դասընթացի կրկնում և քննության (ստուգարքի) վերահանձնում (ԵՊՀ «Ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգ (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2022թ. ապրիլի 7-ի թիվ 8 նիստում), ԵՊՀ ռեկտորի «Դասընթացը կրկնելու գործընթացը կանոնակարգելու մասին» 2023թ. հունվարի 17-ի թիվ 9/55-Լ հրաման):

3. Առարկայական պարտքի հանձնումը և դասընթացի կրկնումը կազմակերպվում են վճարովի հիմունքներով (ԵՊՀ ռեկտորի 2022թ. ապրիլի 20-ի թիվ 75-9-Լ և 2023թ. հունվարի 17-ի թիվ 9/55-Լ հրամաններ):

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սովորողն իրավունք ունի առարկայական պարտքը վերահանձնել երկու անգամ՝ մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ բացառությամբ սույն ընթացակարգի 11-րդ կետով նախատեսված դեպքերի:

5. Բակալավրիատի առկա ուսուցման համակարգում սովորողները 1-5-րդ կիսամյակների առարկայական պարտքը պետք է վերահանձնեն ուսումնառության 2-6-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

6. Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում սովորողները 1-7-րդ կիսամյակների առարկայական պարտքը պետք է վերահանձնեն ուսումնառության 2-8-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

7. Մագիստրատուրայի առկա ուսուցման 90 և 120, հեռակա ուսուցման 60 և 90 կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ կրթական ծրագրերի սովորողները 1-ին կիսամյակի առարկայական պարտքը պետք է վերահանձնեն 2-րդ կիսամյակում:

8. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 120 կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ կրթական ծրագրերի սովորողները 1-3-րդ կիսամյակների առարկայական պարտքը պետք է վերահանձնեն 2-4-րդ կիսամյակն ընկած ժամանակահատվածում:

9. Մագիստրատուրայի առկա ուսուցման 60 կրեդիտ ուսումնական բեռնվածությամբ կրթական ծրագրերում առարկայական պարտքի վերահանձում և դասընթացի կրկնություն չի նախատեսվում:

10. Ավարտական կուրսին նախորդող կիսամյակի առարկայական պարտքի վերահանձնում և դասընթացի կրկնություն չի նախատեսվում:

11. Առարկայական պարտքի վերահանձնման վերջին (1-ին կամ 2-րդ) փորձը կազմակերպվում է ավարտական կուրսին նախորդող ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանում:

3. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

12. Առարկայական պարտքի վերահանձնումը կատարվում է սովորողի դիմումի համաձայն՝ դասընթացի վերահանձնման համար սահմանված վճարումը կատարելուց հետո: Դիմումը կազմվում է կրթական ստորաբաժանումում (ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ) սույն ընթացակարգի Աղյուսակ 1-ում ներկայացված ժամանակացույցի համաձայն և սահմանված ժամկետներում ներկայացվում է ԵՊՀ ընդհանուր բաժին:

13. Սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո ներկայացված դիմումը չի քննարկվում, և քննությունը վերահանձնելու թույլտվություն չի տրվում:

14. Վերահանձնման վերաբերյալ հրամանագրումը կատարվում է սույն ընթացակարգի Աղյուսակ 1-ում ներկայացված ժամանակացույցի համաձայն:

15. Կրթական ստորաբաժանումը կազմում է առարկայական պարտքի վերահանձման ժամանակացույց և ձևավորում հանձնաժողով սույն ընթացակարգի Աղյուսակ 1-ում ներկայացված ժամանակացույցի համաձայն, որոնց հրամանների նախագծերը ներկայացվում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչություն:

16. Կիսամյակի քննաշրջանի լուծարքի կազմակերպման համար ձևավորված հանձնաժողովը կարող է գործել նաև սույն ընթացակարգով նախատեսված վերահանձնման ժամանակ:

17. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) համապատասխան ամբիոնի վարիչը կամ համապատասխան կրթական ծրագրի ղեկավարը կամ համապատասխան ամբիոնի պրոֆեսորը/դոցենտը (հանձնաժողովի նախագահ),

2) համապատասխան դասընթացը կամ գործնական ժամերը վարող դասախոսը,

3) ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչը՝ ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի անվանական կազմը հաստատվում է ԵՊՀ ուսումնական գծով պրոռեկտորի հրամանով:

4. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

18. Առարկայական պարտքի վերահանձնումն իրականացվում է սույն ընթացակարգի Աղյուսակ 1-ում ներկայացված ժամանակացույցի համաձայն: Վերահանձնման քննություններն (ստուգարքներն) անցկացվում են դասապրոցեսից ազատ ժամերին:

19. «Առանց եզրափակիչ գնահատման» դասընթացի քննության վերահանձնման ժամանակ սովորողը բարձրացնում է իր արդյունարար միավորը՝ հանձնելով ընթացիկ քննությունները (պահպանելով նախկինում ստացած միավորները):

20. «Եզրափակիչ գնահատումով» դասընթացի քննության վերահանձնման ժամանակ սովորողը վերահանձնում է եզրափակիչ քննությունը (պահպանելով նախկինում ստացած միավորները):

21. «Առանց ընթացիկ քննությունների գնահատման» դասընթացի քննության վերահանձնման ժամանակ սովորողը վերահանձնում է եզրափակիչ քննությունը (պահպանելով նախկինում ստացած միավորները):

22. Քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջանի ամփոփման արդյունքում առարկայական պարտքի կրեդիտները գումարվում են տվյալ քննաշրջանից պարտք մնացած առարկաների կրեդիտներին և 12 կրեդիտը գերազանցելու դեպքում սովորողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության հիմքով:

23. Վերահանձնման վերջին հնարավորությունից անբավարար գնահատական ստանալու կամ չներկայանալու դեպքում սովորողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության հիմքով:

24. Վերահանձնման արդյունքները և հեռացման ենթակա սովորողների վերաբերյալ զեկուցագիրը կրթական ստորաբաժանման կողմից ներկայացվում է ԵՊՀ ուսումնամեթոդական վարչություն՝ քննությունների ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աղյուսակ 1

№	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ			
1.	Դիմումների ներկայացում	Նոյեմբերի 1-7	Հունվարի 24-31	Ապրիլի 4-10	Հունիսի 20-30 (այդ թվում՝ 11-րդ կետի)
2.	Հրամանագրում	Նոյեմբերի 1-14	Հունվարի 24-ից փետրվարի 7	Ապրիլի 4-17	Հունիսի 20-ից հուլիսի 4 (այդ թվում՝ 11-րդ կետի)
3.	Ժամանակացույցերի, հանձնաժողովների կազմում	Նոյեմբերի 14-20	Փետրվարի 7-13	Ապրիլի 17-23	Հուլիսի 6-13 (այդ թվում՝ 11-րդ կետի)
4.	Քննությունների հանձնում	Նոյեմբերի 21-27	Փետրվարի 15-21	Ապրիլի 25-ից մայիսի 2	Ընթացիկ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի 2-րդ լուծարքային շրջան